

«Անկախ ղիտորղ». տեղեկություն 2019 թ. դեկտեմբերի 8-ի ՏԻՄ ընտրությունների ղիտարկման վերաբերյալ

«Անկախ ղիտորղ» դաշինքն՝ ի դեմս Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի և Իրազեկ քաղաքացիների միավորման, երկարաժամկետ և կարճաժամկետ ղիտորղական առաքելություն է իրականացրել 2019 թ. դեկտեմբերի 8-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում: Դաշինքը ղիտարկել է նախընտրական քարոզչության փուլը և քվեարկության ընթացքը բոլոր 16 համայնքներում (<https://res.elections.am/images/doc/tim08.12.19.pdf>): 13 համայնքում բացվել է մեկական տեղամաս, ևս 3-ում՝ երկուական, որոնք բոլորը ղիտարկվել են Դաշինքի ղիտորղների կողմից: Առաքելության մեջ ներգրավված են եղել 6 երկարաժամկետ և 38 կարճաժամկետ ղիտորղներ, 1 իրավաբան և 3 մուտքագրող:

2019 թվականի դեկտեմբերի 8-ին 12 համայնքներում իրականացվող համայնքի ղեկավարի ընտրություններին մասնակցելու նպատակով առաջադրվել է 36, իսկ 4 համայնքներում՝ ավագանու անդամի ընտրություններին՝ 40 թեկնածուներ, որոնցից մեկն ինքնաբացարկ է ներկայացրել: Մինչ քվեարկության օրն ինքնաբացարկ են հայտնել համայնքի ղեկավարի 8 թեկնածուներ, իսկ Ջովաբեր համայնքի գործող ղեկավարը հետ է վերցրել փաստաթղթերը՝ մինչ գրանցման ավարտը: Արդյունքում՝ Ջարինջա, Թլիկ, Հակո, Ալաշկերտ, Նորապատ և Անտառամուտ համայնքներում բնակիչները քվեարկել են 1 թեկնածուի՝ կողմ կամ դեմ:


Մարզ	համայնք	համայնքի ղեկավարի նախորդ թեկնածուներ	համայնքի ղեկավարի ներկա թեկնածուներ
Արարատ	Տափերական	1	8
Արմավիր	Ալաշկերտ	2	1
Արմավիր	Ֆերիկ	1	3
Արմավիր	Նորապատ	2	1
Արագածոտն	Զարինջա	2	1
Արագածոտն	Թլիկ	2	1
Արագածոտն	Կոշ	2	3
Արագածոտն	Հակո	2	1
Արագածոտն	Ավան	3	3
Գեղարքունիք	Զովաբեր	2	3
Լոռի	Անտառամուտ	2	1
Կոտայք	Ողջաբերդ	1	2
Ընդամենը		22	28
Մարզ	համայնք	ավագանու անդամի նախորդ թեկնածուներ	ավագանու անդամի ներկա թեկնածուներ
Արարատ	Նորաշեն	20	15
Արմավիր	Ծիածան	8	5
Գեղարքունիք	Դդմաշեն	9	8
Շիրակ	Անուշավան	8	11
Ընդամենը		45	39

Տեղամասային ընտրական հանձնաժողովների առավելագույնը նիստի դիտարկման համաձայն՝ արձանագրվել է հետևյալ իրավիճակը:

Տեղամասային կենտրոնների մատչելիությունը, կահավորանքը և հանձնաժողովի նիստը


- 10 տեղամասում նիստն սկսվել է ուշացումով՝ հանձնաժողովի տարբեր անդամների ուշացման պատճառով,

Հանձնաժողովի տարբեր անդամների ուշացման պատճառով նիստը /տեղամասերի քանակ/




- դիտարկված տեղամասերից 11-ը գնահատվել են որպես անմատչելի, 5-ը ունեցել է թեքահարթակ կամ հարթ մուտք, և 3-ը գնահատվել են մասամբ մատչելի, բոլոր դեպքերում քվեարկության սենյակները գտնվել են առաջին հարկում,

Դիտարկված տեղամասերից գնահատվել են



- դիտարկված տեղամասերից 2-ում նախատեսված չի եղել որևէ հատուկ միջոց՝ տեսողության խնդիրներ ունեցող անձանց ինքնուրույն քվեարկության համար, մյուս տեղամասերն ապահովված են եղել միայն խոշորացույցներով, որոնց առկայության մասին հանձնաժողովականները շատ անգամ տեղյակ չեն եղել,
- 1 քվեասենյակում լուսամուտների դասավորվածության պատճառով կարող էր խախտվել քվեարկության գաղտնիությունը, տարածքային ընտրական հանձնաժողովի միջամտությամբ, սակայն ձեռնարկվել են միջոցներ,
- 2 քվեասենյակում քվեախցիկներում լուսավորության մակարդակը դիտորդները գնահատել են անբավարար,
- 1 քվեասենյակում փակցված չի եղել քվեարկության մասին իրազեկող որևէ տեղեկություն,

Քվեասենյակում փակցված է քվեարկության մասին իրազեկող որևէ տեղեկություն /տեղամասերի քանակ/




- տեխնիկական սարքից 0-ական տեղեկանքի տպման հետ խնդիրներ են եղել 1 տեղամասում,
- հանձնաժողովի անդամների գործառույթների վիճակահանության կարգը չի խախտվել որևէ տեղամասում, փոխարենը՝ նիստի ընթացակարգեր են խախտվել 2 տեղամասում,
- 3 տեղամասում հանձնաժողովի նիստին փորձել են ներկա գտնվել համայնքի ղեկավարի 2 և ավագանու անդամի 1 թեկնածուներ, որոնք դուրս են հրավիրվել հանձնաժողովների նախագահների կողմից:

Քվեարկության ընթացքը տեղամասերի ներսում


- դիտարկված 19 տեղամասերից 7-ում ներկա են եղել քվեասենյակում գտնվելու իրավունք չունեցող անձինք, 2 դեպքում՝ հանձնաժողովի նախագահի կողմից չիրավիրված ոստիկան, 7 դեպքում՝ միևնույն թեկնածուի 2 վստահված անձ, 2-ում՝ թեկնածու, 1 անհայտ անձ, որն ուղղորդել է ընտրողներին և արդեն քվեարկած ընտրողներ, ովքեր չէին հեռանում տեղամասային կենտրոնից: Խնդիրները վերացվել են հանձնաժողովների նախագահների կողմից: Դիտարկվող ժամանակահատվածում գրանցվել են կրկնաքվեարկության և այլ անձի փոխարեն քվեարկության մեկական դեպքեր՝ երկուսն էլ կապված միաժամանակ տեղամասում գտնվող նույն ընտանիքի անդամների հետ,

Ներկա են եղել քվեասենյակում գտնվելու իրավունք չունեցող անձիք /տեղամասերի քանակ/




- դիտարկվող 19 տեղամասերից 12-ում արձանագրվել է մեկից ավելի անձանց մուտք քվեախցիկ և կրել պարբերական բնույթ, իսկ Արարատի մարզի Նորաշեն համայնքում՝ համակարգային բնույթ: Արձանագրված դեպքերը, դիտորդների գնահատմամբ, կապված են եղել չիմացության հետ: Տափերական և Ավան համայնքներում, սակայն, դրանք կրել են շատ ավելի վերահսկողական բնույթ,

Գրանցվել է մեկից ավելի անձանց մուտք քվեախցիկ




- ինքնուրույն քվեարկելու հնարավորություն չունեցող անձանց օգնելու դեպքեր դիտարկվել են 14 տեղամասում, որոնցից 5-ում օգնող անձինք չեն հանդիսացել նույն տեղամասի ընտրողը և փաստացի չեն ունեցել տեղամասում գտնվելու իրավունք: 5 տեղամասում օգնող անձինք ոչ միշտ էին հետաքրքրվում ընտրողի կամքով, 2 դեպքում՝ օգնողի գործողությունները գնահատվել են որպես վերահսկողություն՝ դիտորդի կողմից,
- դիտորդները չեն արձանագրել նույն անձի կողմից մեկից ավել քվեարկելուն օգնելու դեպքեր, մտահոգիչ է, որ առկա կարգավորումները դեռևս թույլ չեն տալիս այդ պրոցեսի վերահսկողությունը, ինչպես նաև չեն ապահովում ընտրողի կամքի ինքնուրույն արտահայտման հնարավորությունները,
- վկայականը տեսանելի չեն կրել 8 տեղամասում՝ հիմնականում վստահված անձինք և հանձնաժողովի անդամներ,

Վկայականն ոչ տեսանելի կրելու դեպքեր /տեղամասերի քանակ/




- դիտարկված տեղամասերից 8-ում խախտումները և գնահատականները գրանցամատյանում չեն գրանցվել կամ գրանցվել են ոչ միշտ,

Խախտումները և գնահատականները գրանցամատյանում գրանցվել կամ գրանցվել են ոչ միշտ /տեղամասերի քանակ/



- 7 տեղամասում քվեարկության կարգն ընտրողին չեն ներկայացրել կամ ներկայացրել են ոչ միշտ,


Քվեարկության կարգն ընտրողին ներկայացրել են



- խախտումների առնչությամբ իրավասու անձինք գործողություններ չեն ձեռնարկել 2 տեղամասում,
- 3 տեղամասում ընտրողը ներկայացել է այլ անձի փաստաթղթով, բոլոր դեպքերում դա եղել է պատահականության արդյունք,
- քվեախցիկից դուրս քվեաթերթիկի լրացման դեպք արձանագրվել է 11 տեղամասում, իսկ Արմավիրի մարզի Ֆերիկ, Ալաշկերտ և Նորապատ համայնքներում դա կրել է, գրեթե, համակարգային բնույթ, ընդհանուր առմամբ՝ նման 65 դեպք է գրանցվել: Ֆերիկում արձանագրվել է նաև քվեաթերթիկը լուսանկարելու դեպք, բոլոր դեպքերը դիտորդները գնահատել են որպես գաղտնիությունը չկարևորելու արդյունք: 2 դեպքում նման վարքը կապված է եղել նաև տեսողական խնդիրների հետ,
- ուշագրավ է, որ որևէ տեղամասում չի նկատվել քվեարկությունը բարձրաձայնելու որևէ դեպք,
- տեղամասային կենտրոնի ներսում կուտակումներ նկատվել են Արարատի Նորաշեն և Արագածոտնի Կոչ համայնքների տեղամասերում, ընդ որում՝ Նորաշենում դրանք կրել են հաճախակի կրկնվող բնույթ, ինչի պատճառով Նորաշենի 12/1 տեղամասի հանձնաժողովի նախագահը տեղամասում միաժամանակյա գտնվելու այլ առավելագույն թիվ է սահմանել,
- Նորաշենի 12/2 տեղամասում հանձնաժողովի անդամներից մեկն իր վրա է վերցրել հանձնաժողովի նախագահի պարտականությունները՝ վատ վերաբերմունք ցույցաբերելով ընտրողների հանդեպ: Վիճաբանության արդյունքում իրավիճակը հարթվել է: Տեղամասում նման երկիշխանության պայմաններում դիտորդների կողմից բարձրաձայնվող խախտումներն, այդուհանդերձ, գրանցվել են գրանցամատյանում:

- Շիրակի մարզի Անուշավան համայնքում հանձնաժողովի նախագահի պարտականությունները մասամբ իր վրա է վերցրել վստահված անձանցից մեկը, ինչը դադարեցվել է՝ դիտորդների կողմից օրենքը մեջբերելուց հետո,
- ընտրողների ստորագրած ցուցակներին ծանոթանալու դեպք արձանագրվել է միայն Արարատի մարզի Տափերական համայնքի 13/2 տեղամասում: 2-րդ տեղն զբաղեցրած համայնքի ղեկավարի թեկնածու Ազիզ Հովսեփյանի վստահված անձը ճշտել է հանձնաժողովի անդամից դեռ չքվեարկած ընտրողների հասցեները, ինչը դադարեցվել է՝ խնդիրն արձանագրելուց հետո: Մեկ այլ իրավիճակ է տեղի ունեցել Արմավիրի մարզի Ծիածան համայնքում, ուր տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից նշանակված հանձնաժողովականը, լինելով տեղի բնակիչ, հեռախոսազանգերով բնակիչներին հրավիրել է մասնակցելու քվեարկությանը: Մինչդեռ ավագանու 5 անդամ ունեցող համայնքում, թեկնածուներից մեկի ինքնաբացարկից հետո, մնացած 5 թեկնածուները փաստացի դատապարտված են եղել հաղթել ընտրություններում: Ընտրություններին մասնակցությունը բարձրացնելու նման գործառույթը չի համապատասխանում հանձնաժողովի անդամի լիազորություններին և խիստ վիճելի է,
 - 3 տեղամասում գրանցվել է վիճաբանություն. դեպքերից մեկը՝ hzham.am կայքի լրագրողի մասնակցությամբ

**Գրանցվել է վիճաբանություն
/տեղամասերի քանակ/**




- գործառույթների հերթափոխը պահպանվել է դիտարկված բոլոր տեղամասերում:

Տեղամասերի շրջակայքի դիտարկում՝ քվեարկության ընթացքում

- դիտարկված տեղամասերից 5-ի շրջակայքում մասամբ են ձեռնարկվել խախտումների առնչությամբ գործողություններ,
- դիտարկված տեղամասային կենտրոններից 1-ի շուրջ կամ անմիջապես մուտքի մոտ նկատվել են քարոզչական պաստառներ՝ Տափերական համայնքի ղեկավարի առավելագույն ձայներ ստացած թեկնածու Կարեն Խաչատրյանի քարոզչական պաստառը, որն անհնար է եղել վերացնել, 2-ի մոտ՝ բանավոր քարոզչություն և ընտրողների հորդորներ՝ վստահված անձանց կողմից՝ Նորաշեն և Կոշ համայնքներում,
- 5 տեղամասի շրջակայքում նկատվել է ընտրողների կազմակերպված տեղափոխում՝ դարձյալ Տափերական, Նորաշեն և Կոշ համայնքներում: Կոշում ընտրողների տեղափոխության գործառույթն իրականացրել է համայնքի գործող ղեկավարի վստահված անձը,
- դիտարկված տեղամասերից 13-ում՝ տեղամասային կենտրոնի հարակից տարածքում, նկատվել են մարդկանց կուտակումներ, որոնցից 6-ում ուստիկանությունը միջոցներ չի ձեռնարկել այն վերացնելու համար, 4-ի տեղամասերի մոտ արձանագրվել է վիճաբանություն:

Տեղամասի շրջակայքում նկատվել է ընտրողների կազմակերպված տեղափոխում



Քվեարկության արդյունքների դիտարկում՝ ամփոփման ընթացքում

Բոլոր տեղամասերում ամփոփման նիստն սկսվել է քվեարկությունից անմիջապես հետո:

Դիտարկված տեղամասերից 3-ում դիտորդները նշել են, որ հանձնաժողովի նախագահը մասամբ է տիրապետում ամփոփման կարգին և 2 տեղամասում հաշվարկը չի իրականացվել ըստ սահմանված կարգի: Դիտարկված տեղամասերից միայն 1-ում է եղել 1 ծրար, որում քվեաթերթիկից բացի, այլ իր էլ է եղել (առանց դրոշմանիշի դատարկ քվեաթերթիկ): Դրանցից դուրս բերված

դրոշմանիշով քվեաթերթիկը համարվել է վավեր: Կոշ համայնքի 18/4 տեղամասում թեկնածուների վստահված անձինք անմիջականորեն մասնակցել են հաշվարկի գործընթացին և դադարեցրել են դա միայն դիտորդների հորդորների արդյունքում: Դիտարկված 1 տեղամասում եղել է վկայականը տեսանելի չկող վստահված անձ:

Ընդհանուր առմամբ կարելի է արձանագրել, որ հանձնաժողովների կողմից խախտումները կրել են ընթացակարգային բնույթ և չեն եղել ուղղորդված: Այնուամենայնիվ նկատելի է, որ 2 տեղամաս ունեցող, ավելի մեծ համայնքներում (Տափերական, Նորաշեն, Կոշ) կիրառվել է կասկածելի գործելաոճ, ինչպիսիք են վստահված անձանց կողմից ուղղորդումը և ընտրողների տեղափոխությունը, որը զուգորդվել է քվեարկած ընտրողների ցուցակին ծանոթանալու փորձերով, կուտակումներով և վիճաբանություններով՝ կապված հաղթող թեկնածուների հետ: Տեղափոխումները չեն կրել համակարգային բնույթ, իսկ ուղղորդումները չէին կարող վճռորոշ ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա, այդուհանդերձ վստահված անձանց նման գործելաոճը մերժելի է: Նման դեպքերը պիտի կանխվեն ոստիկանության և ընտրական հանձնաժողովների համաձայնեցված աշխատանքի շնորհիվ:

Հարկ է նշել, որ թերություններով հանդերձ, մի քանի թեկնածու ունեցող համայնքներում ընտրություններն անցել են մրցակցային մթնոլորտում և արտահայտել ընտրողների կամքը, ինչը ՏԻՄ համակարգի կայացման կարևորագույն նախապայմաններից մեկն է: